ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

Երևան-0010, Հանրապետության հր. Կառավարական տուն 3

"21" նոյեմբերի 2024թ. N 64-Հ

ՀՐԱՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԶԵՐԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԵՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 659-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 19-րդ կետի 20-րդ ենթակետը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության մարզերի համայնքների աշխատակազմերի համայնքային ծառայողների վերապատրաստման ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

11/21/2024

X

ԴԱՎԻԹ ԽՈՒԴԱԹՅԱՆ

ՆԱԽԱՐԱՐ՝ Signed by: KHUDATYAN DAVIT 1308910274 **Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ**

ք. Երևան

Հավելված

Հայաստանի Հանրապետության տարածքային

կառավարման և ենթակառուցվածքների նախարարի

2024 թվականի Հունվարի 21-ի N 64-Լ հրամանի

ԾՐԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԶԵՐԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԵՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ

NN	Թեմաների անվանումները	Ժամաքանակը		
		Ընդամենը	այդ թվում՝	
			Դասախոսություն	Գործնական պարապմունք
1	2	3	4	5
	Տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությունը սահմանող Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը (34 ժամ)	**34**	**20**	**14**
1.	Տեղական ինքնակառավարման համակարգը Հայաստանի Հանրապետությունում	3	2	1
2.	Տեղական ինքնակառավարմանը համայնքի բնակչության մասնակցության ձևերը	2	1	1
3.	**Համայնքների միավորումը:** Համայնքների միավորումը, որպես համայնքային ֆինանսատնտեսական կարողությունների օգտագործման արդյունավետության ու նպատակայնության և համայնքների զարգացման ապահովման հիմնական ուղղություն	2	1	1
4.	Տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության հրապարակայնության, հաշվետվողականության և թափանցիկության ապահովման իրավական հիմքերը և կառուցակարգերը	1	1	
5.	Համայնքի աշխատակազմը՝ որպես կառավարչական հիմնարկ, բյուջետային հիմնարկները, համայնքային			

	ենթակայության առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունները և դրանց հետ հարաբերությունները կարգավորող իրավական հիմքերը	2	2	
6.	Համայնքի բյուջեն, բյուջեի ձևավորման սկզբունքներն ու կառուցվածքը, համայնքի բյուջեի մուտքերը և ելքերը: Բյուջեի նախագծի կազմումը: Համայնքի բյուջեի կատարման հաշվետվությունների կազմումը, բյուջեի հրապարակայնությունը	4	2	2
7.	Համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը	4	2	2
8.	Պետության կողմից համայնքներին ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրվող դոտացիայի հաշվարկի համար ներկայացվող ցուցանիշների հավաստիությունը	2	1	1
9.	Համայնքի ղեկավարի լիազորությունները՝ ըստ բնագավառների	2	1	1
10.	Տեղական հարկերի բազաների վարումը	2	1	1
11.	Համայնքի սեփականության և գույքային այլ իրավունքները	2	1	1
12.	Առևտրի և ծառայությունների ոլորտում թույլտվությունների տրամադրման մեխանիզմները	1	1	
13.	Համայնքի նկատմամբ պարտավորությունների կատարումն ապահովող միջոցառումները (այդ թվում՝ վճարման կարգադրություն, բռնագանձում և այլն)	1	1	
14.	Համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված ՀՀ պետական աջակցության դերը և նշանակությունը	4	2	2
15.	Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունված որոշումների նկատմամբ իրավական և մասնագիտական հսկողությունը	2	1	1
«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք (6 ժամ)		**6**	**5**	**1**
16.	«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք և օրենքից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր	1	1	
17.	Իրավական ակտի հասկացությունը և տեսակները: Հանրային քննարկումը: Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի փորձաքննությունը և ժամկետները	1	1	
18.	Օրենսդրական տեխնիկայի կանոնները: Նորմատիվ իրավական ակտին ներկայացվող ընդհանուր պահանջները: Նորմատիվ իրավական ակտի կառուցվածքը:	2	1	1

19.	Նորմատիվ իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելը, նորմատիվ իրավական ակտերի գործողությունը կասեցնելը և դադարեցնելը	1	1	
20.	Նորմատիվ իրավական ակտի նորմի մեկնաբանումը: Իրավական ակտերի միջև հակասությունների դեպքում կիրառվող կանոնները	1	1	
	Համայնքային ծառայության մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրություն (6 ժամ)	**6**	**4**	**2**
21.	Համայնքային ծառայությունը՝ որպես հանրային ծառայության տեսակ	3	2	1
22.	Համայնքային ծառայության բնագավառի օրենսդրական հիմնական կարգավորումները	2	1	1
23.	Համայնքային ծառայության համակարգի զարգացման միտումները	1	1	
	Կառավարչական հմտություններ (18 ժամ)	**18**	**9**	**9**
24.	**Բարեվարքություն** • Բարեվարքության շրջանակը հանրային ծառայությունում: Բարեվարքության հասկացությունը: • Համայնքային ծառայողների վարքագծի կանոնագիրքը: • Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների շահերի բախում: • Անհամատեղելիության պահանջներ: Այլ սահմանափակումներ: Նվերներ ստանալու սահմանափակումներ: • Բարեվարքության հարցերով կազմակերպիչների, էթիկայի հանձնաժողովի դերը և իրավասությունները: • Կոռուպցիա հասկացությունը և տեղական ինքնակառավարման համակարգում կոռուպցիայի ընկալման մակարդակը	6	3	3
25.	**Կոնֆլիկտների կառավարում** Կոնֆլիկտների էությունը և ձևերը Կոնֆլիկտների կառավարման հիմնական մեթոդները	2	1	1
26.	**Մոտիվացիան և աշխատանքի արդյունավետությունը**	2	1	1
27.	**Թիմային աշխատանք**	2	1	1
28.	**Փաստաթղթերի նախապատրաստում** Փաստաթղթերի նշանակությունը կառավարման համակարգում Պաշտոնական նամակագրություն	6	3	3
	ԸՆԴԱՄԵՆԸ	**64**	**38**	**26**